158. ԳՅՈՒԼԻ-ԱՍՊԱՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ էրկու ախպեր. պիծինը՝ թաքավեր, մեծը՝ սարտար։ Էս սարտարիս մին տղա յա իլալ, անումը տիրալ ըն Ասպար։ Մին տղա էլ թաքավերին ա իլալ, անումը Գյուլի։ Էս Ասպարը յաշավ մեծն ա իլալ, Գյուլին՝ պուճուրը։ Էս Գյուլին աման կոխ կնալիս վախտը Ասպարին կոխում ա իլալ։ Մին վախտ էտ էրկունը տռանը խաղ ընելիս վախտը մին օշափ եկալ ա Գյուլուն եր կալալ, փախալ, տարալ քիցալ մին հոր։ Էն հորումն էլ շատ մարթ ա իլալ։ Էս օշափը ամման վախտ հորին գլխան հաց ա իլալ քցում, օտում ըն իլալ։ Գյուլին որ եկալ ա մին երեսուն տարեկան տանալ, էս օշափը նի յա մտալ հորը, թա Գյուլուն տուս օնի, օտի։ Գյուլին ասալ ա. «Հոր ը՞ս եկալ»։ Օշափն էլ ասալ ա. «Քեզ պերալ ըմ ըտեղ քիցալ, մըհեկյ, տանում ըմ օտեմ»։ Էս Գյուլին ասալ ա. «Տու հինչ կա՞րող ըս ինձ օտես»։ Էս օշափը եշալ չի, հորիցը տուս ա կալալ, թա տանի օտի, Գյուլին որ գլխին թխալ ա, գլխը կտրվալ ա։

Ետնան էս Գյուլին եկալ ա մին ծմակում տոն շինալ, ընդեղ կացալ։ Մին վախտ տեսալ ա, որ հես ա մին ղոշուն ա կյալիս, որ էս ղոշունն էլ ուրան հարն ա ղրկալ օրիշ թաքավերի երա։ Էն ծմական մին ծառ ա կտրալ, քյինացալ էն ղոշունը կտորալ, թողացալ չի քյինան։ Ետնան էս Գյուլուն հարը շատ ղոշուն ա վըհաքալ, Ասպարին էլ տիրալ նհետը, թա քյինացեք փռնոտեցեք պերեք։ Էն Ասպարը ղոշունավը քյինացալ ա թա կուռ անի, էս Գյուլին ասալ ա կուռ մի անիլ, եկ կոխ կենանք, որ տու կոխես,

քինձ փռնի տուր, որ ես կոխեմ, ես ըմ գյուտում հինչ կանեմ՝ կանեմ։ Կոխ ըն կացալ. էս Գյո̈ւլին որ էս Ասպարին հիլո̈րալ ա տիռա̈լ տակին, ետնան էս Ասպա̈րը ղանչանք ա ըրալ, թա. «Քմատաղ, ինձ լսպանիլ միր»։ Ետնան Գյո̈ւլին պաց ա թողալ. քյինա̈ցալ ա հորը ասալ թա ես էլ կարալ չըմ ընտրա փռնեմ։ Ետնան էս Գյո̈ւլո̈ւն հա̈րը սաղ ղոշունավը, կնկանավը քյինա̈ցալ ա էս Գյո̈ւլո̈ւն ոնները ինկյա̈լ, թա. «Խե՞ յըս իմ ղոշունըս կտորում»։ Ետնան էս Գյո̈ւլո̈ւն պիրալ ըն թաքավեր տիրա̈լ։ Ետնան Գյո̈ւլուն հա̈րը գյիտացալ ա, որ էս ո̈ւրա̈ն տղան ա, ասալ ա տղին, թա. «Տու իմ տղաս ըս, հաղ անում վախտը մին օչափ եկավ քեզ եր կալավ, տարավ գիդացենքյ ոչ, թե հո՞ր տարավ»։

Աստվածանից իրեք խնձո̈ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին։